2126.711366

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

«03» 03 2021թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0043-21

Ձեռնարկողը՝ ***«Հիդրո» ՍՊԸ***
ք. Սիսիան, Շիրվանզադեյի փող. շենք 5.

Գործունեությունը՝ ***Վաղափինի ավազակոպճային խառնուրդի երևակման տարածքում 2020-2021թ.թ. ընթացքում օգտակար հանածոյի երկրաբանական ուսումնասիրության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
Սյունիքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝ Գ. Գևորգյան

Առդիր եզրակացությունը՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0043-21

< 03 > 03 2021թ.

Վաղատինի ավազակոպճային խառնուրդի երևակման տարածքում 2020-2021թ.թ.ընթացքում օգտակար հանածոյի երկրաբանական ուսումնասիրության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝ «Հիդրո» ՍՊԸ

Ներկայացված նյութեր՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ /Գ կատեգորիա/

Գտնվելու վայրը՝ Սյունիքի մարզ, Վաղատին բնակավայր

Ներածական մաս. Սյունիքի մարզի Վաղատինի ավազակոպճային խառնուրդի երևակման տարածքում նախատեսվում է իրականացնել օգտակար հանածոյի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ:

Վաղատինի ավազակոպճային խառնուրդի երևակման տեղամասը գտնվում է Սյունիքի մարզի Վաղատին բնակավայրի վարչական տարածքում: Երևակման հեռավորությունը Նորավան գյուղի բնակելի տներից կազմում է 2.4կմ, Նորավան գյուղի գյուղ.արտադրական համալիրից՝ 1.7կմ, Վաղատին գյուղի բնակելի տներից՝ 1.5կմ: Մոտակա բնակավայրերն են Գորայք, Ծղուկ, Անգեղակոթ, Սառնակունք և Շաքի գյուղերը: Երևակման հողերը ներկայացված են գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողերով:

Նախատեսվող գործունեությունը համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի ա. ենթակետի, հանդիսանում է Գ կատեգորիայի գործնեության տեսակ:

Նկարագրական մաս. Երևակման ավազակոպճային խառնուրդը նախատեսվում է ուսումնասիրել որպես հումք շինարարական խճի և ավազի, ինչպես նաև ճանապարհաշինարարական պաստառահումքի արտադրության համար:

Օգտակար հանածոն իր որակական հատկություններով պետք է բավարարի ՀՍՏ ԳՕՍՏ 8267-95 «Խիճ և կոպիճ խիտ լեռնային ապարներից շինարարական աշխատանքների համար» ՀՍՏ ԳՕՍՏ 8736-2014 և «Ավազ շինարարական աշխատանքների համար» տեխնիկական պահանջներին համապատասխան վերջնաարտադրանքների ստացումով:

Երկրաբանահետախուզական աշխատանքները կիրականացվեն երկրաբանահանութային երթուղիների, հորատանցքերի ու մաքրվածքների անցման

02543163 ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

միջոցով՝ հաշվի առնելով նաև բնական և արհեստական մերկացումները, որը կուղեկցվի համապատասխան փաստագրման և նմուշարկման աշխատանքների համալիրով:

Օգտակար հանածոյի որակական հատկությունների (ֆիզիկատեխնիկական ցուցանիշների) ուսումնասիրությունները կիրականացվեն մասնագիտացված լաբորատորիայում: Կկատարվեն նաև օգտակար հանածոյի քիմիական և միներալոգիական ուսումնասիրություններ:

Սյունիքի մարզի Վաղատինի ԱԿԽ-ի երևակման ծայրակետային կոորդինատները ARM WGS-84 կոորդինատային համակարգով հետևյալն է.

X_1 – 4377336	Y_1 - 8596337
X_2 – 4377478	Y_2- 8596429
X_3– 4377662	Y_3 - 8596477
X_4 – 4377478	Y_4 - 8596554
X_5 - 4377296	Y_5 – 8596406

Երևակման տարածքի երկրաբանական կառուցվածքի ճշգրտման, քարտեզագրման նպատակով (1:1000 մասշտաբի) նախատեսվում է 3.0հա մակերեսով տարածքում կատարել երկրաբանահանույթային աշխատանքներ:

Հորատման աշխատանքները կիրականացվեն սյունակային հորատման ուղղաձիգ հորատանցքերի հորատման միջոցով: Հորատումը կկատարվի կարծր համաձուլվածքային թագիկներով՝ 132-112մմ տրամագծով: Նախատեսվում է հորատել մինչև 37-55 մետր խորության 4 հորատանցքեր՝ 191.0մ ընդհանուր ծավալով, հորատահանուկի նվազագույն ելքը՝80%:

Հորատվող ապարները համապատասխանում են հետևյալ կարգերին:

- Ժամանակակից դելյուվիալ առաջացումներ - IV կարգ
- ավազակոպիճ -VI կարգ:

Նախատեսվում է հորատող հաստոցի 4 տեղակայում և տեղահանում:

Օգտակար հանածոյի մարմնի եզրագծման, ուսումնասիրման և նմուշարկման նպատակով նախատեսվում է 3 մաքրվացքների անցում: Այդ աշխատանքները կիրականացվեն մեխանիկական եղանակով՝ էքսկավատորով VI կարգի ամրության ապարներում, 30գծ.մ ընդհանուր ծավալով:

Մանրամասն երկրաբանական փաստագրման ենթակա են բոլոր հորատանցքերը, մաքրվացքները և մերկացումները: Երկրաբանական փաստարման աշխատանքները նախատեսվում է կատարել 1:50 մասշտաբով: Այդ աշխատանքների ծավալը նախատեսում է՝

- հորատացքի հանուկի - 191գծ.մ.
- մաքրվացքներ - 30.0գծ.մ.

Նախատեսվում է մաքրվացքների անցման ընթացքում, դաշտային պայմաններում երեք կետում որոշել բնամասում ԱԿԽ-ի ծավալային զանգվածը, ինչպես նաև հումքի փխրեցման գործակիցը:

Ավազակոպճային խառնուրդը նախատեսվում է ուսումնասիրել որպես հումք շինարարական խճի և ավազի արտադրության համար:

Օգտակար հանածոյի որակական հատկանիշները պարզաբանելու համար նախատեսվում է վերցնել նմուշներ հորատանցքի հորատահանուկից, մաքրվացքներից և մերկացումներից:

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՏՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՏՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՏՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTRE
02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Մաքրվացքներից նախատեսնվում է վերցնել 3 նմուշ ֆիզիկամեխանիկական փորձարկումների համար, 3 նմուշ քիմիական անալիզների և 3 նմուշ միներալոգո-պետրոգրաֆիական ուսումնասիրությունների համար: Նմուշարկումը կիրականացվի ակոսային եղանակով՝ օգտակար հանածոյի ամբողջ հզորությամբ, ակոսի կտրվածքը՝ 0.3 x 0.1մ չափերով: Յուրաքանչյուր նմուշի կշիռը բազմափուլ կրճատումից հետո նախատեսվում է հասցնել 30կգ-ի: Հորատահանուկից՝ 34 նմուշ /նմուշի երկարությունը 5մ միջակայքով/ :

Վերցված նմուշները կենթարկվեն ֆիզիկամեխանիկական (լրիվ ցիկլով) փորձարկումների մասնագիտացված լաբորատորիայում:

Նախատեսվում է նաև ռադիոմետրիական ուսումնասիրություններ՝ օգտակար հանածոյի ռադիացիոն հիգիենիկ հատկությունների ուսումնասիրման նպատակով, որը կիրականացվի СРП-68-01 ռադիոմետրիական չափիչ սարքի միջոցով:

Երկրաբանահետախուզական աշխատանքների ընթացքում նախատեսվում է կատարել ինժեներաերկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանների ուսումնասիրություններ, որոնք կիրականացվեն հորատանցքների և մերկացումների անցման ընթացքում կատարվելիք դիտարկումներով: Անհրաժեշտության դեպքում վերոհիշյալ ուսումնասիրությունները կկատարվեն մասնագիտացված կազմակերպությունների հետ համագործակցելով:

Ծրագրով, ճանապարհների շինարարական աշխատանքներ չեն նախատեսվում, հորատման ժամանակ կօգտագործվեն գոյություն ունեցող դաշտամիջյան ճանապարհները:

Նախագծված երկրաբանահետախուզական աշխատանքների անվտանգությունն ապահովվելու նպատակով նախատեսվում է իրականացնել անվտանգության տեխնիկայի համապատասխան հրահանգների բոլոր պահանջները:

Ջրային ռեսուրսների աղտոտում տեղի չի ունենա, քանի որ երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների տեխնոլոգիայով արտահոսքեր չեն նախատեսվում:

Հողաբուսական շերտի պահպանության նպատակով նախատեսվում է նախագծված հետախուզափորվածքների, մաքրվացքների անցման ժամանակ հանել հողի վերին շերտը և պահեստավորել: Ամբողջ բացահանքի ճակատային մասով հողաբուսական շերտի հզորությունը կազմում է 0.2մ: Երկրաբանահետախուզական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է իրականացնել ռեկուլտիվացիոն աշխատանքներ և պահեստավորված հողաշերտով վերականգնել լանդշաֆտը: Ռեկուլտիվացիոն աշխատանքների իրականացման համար ընկերության կողմից նախատեսվում է հատկացնել 60000 ՀՀ դրամ գումար: Ռեկուլտիվացման ծավալը կազմում է 12մ^3:

Անմիջապես երևակման տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցած բույսեր և կենդանիներ ինչպես նաև դրանց աճելավայրեր կամ ապրելավայրեր չեն արձանագրվել, բնության հուշարձաններ հաշվառված չեն, երևակման տարածքում բնության հատուկ պահպանվող տարածքներ, որտեղ իրականացվում է վտանգված էկոհամակարգերի պահպանություն, չկան:

Բնապահպանական միջոցառումների, մոնիթորինգի իրականացման համար նախատեսվում է տարեկան մասնահանել 350.0 հազ.դրամ:

Նախատեսվում է շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր, այդ թվում՝

- տարածքում աշխատող տեխնիկան լիցքավորել մոտակա լիցքավորման կայանում՝ բացառելով նավթամթերքների պահեստավորում տարածքում,

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

- օգտագործված յուղերի ու քսայուղերի հավաքում առանձին տարրաների մեջ՝ հետագա ուտիլիզացման կամ երկրորդական վերամշակման համար,

- հնամաշ դետալների ու մասերի հավաքում հատկացված առանձին տեղում և հանձնում որպես մետաղական ջարդոն,

-կենցաղային աղբի կուտակում առավելագույնը 35լ տարողությամբ տոպրակների մեջ և տեղափոխում Գորիսի կամ Սիսիանի քաղաքային համայնքի աղբամաներ, որտեղից պարբերաբար կոմունալ ծառայության կողմից կտեղափոխվեն աղբավայր:

- տարածքում աշխատող տեխնիկան պարտադիր պետք է լինեն սարքին վիճակում և ունենան արտաթորվող թունավոր նյութերի չեզոքացուցիչ և ձայնախլացուցիչ սարքեր,

- փոշենստեցման նպատակով փոշեառաջացման օջախի մուտքային ավտոճանապարհի ջրում տարվա չոր և շոգ եղանակներին: Ջուրը նախատեսվում է բերել համապատասխան ջրօգտագործման պայմանագրերի համաձայն՝ մոտակա բնակավայրերից, ավտոցիստեռնով: Խմելու շշալցված ջուրը գնվելու է մոտակա բնակավայրերի խանութներից և տեղափոխվելու է երևակման տարածք աշխատանքները սպասարկող մեքենայով,

- կեղտաջրերի հավաքում հորատիպ զուգարանում, որը դատարկում է հատուկ ծառայության ուժերով,

- խախտված տարածքների ռեկուլտիվացիա,

- ըստ կիրառելիության ՀՀ կառավարության 31.07.2014թ.-ի N 781-Ն որոշման դրույթների ապահովում:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում «Հիդրո» ՍՊ ընկերությունը իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանը և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

- մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, հորատման, մակերևութային փորվածքների անցման շրջանում, շաբաթական մեկ անգամ հաճախականությամբ,

- օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով, աղտոտիչ նյութերով հայցվող տեղամասի հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ:

- նավթամթերքներով տեղամասում հողերի աղտոտվածության մոնիթորինգ՝ տարեկան մեկ անգամ հաճախականությամբ,

- երևակմանը հարակից՝ գետակի ջրերի մոնիթորինգ շաբաթական մեկ անգամ հաճախականությամբ,

- երևակման հարակից տարածքում կենսաբազմազնության մոնիթորինգ:

Պատճառաբանական մաս. Սյունիքի մարզի Սիսյան համայնքում օրենսդրությամբ սահմանված կարգով, իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեությանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, պաշտպանության, նախարարությունները, ինչպես նաև Սյունիքի մարզպետարանը: Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ և ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Փորձաքննական պահանջներ

- Երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել շրջակա միջավայրի բաղադրիչների մոնիթորինգ և արդյունքները ՀՀ կառավարության 2018թ. փետրվարի 22-ի N191-Ն որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել շրջակա միջավայրի նախարարություն:
- Երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտում ամրագրված բնապահպանական միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում՝ նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ապահովելով բնապահպանական նորմերը:
- Անհրաժեշտ է ապահովել հայտում ամրագրված ռեկուլտիվացիայի աշխատանքների իրականացումը:
- ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն, աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմնին՝ համապատասխան պահպանական միջոցառումներ իրականացնելու համար:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Հիդրո» ՍՊԸ կողմից ներկայացված Սյունիքի մարզի Վաղատինի ավազակոպճային խառնուրդի երևակման տարածքում 2020-2021թ.թ. ընթացքում օգտակար հանածոյի երկրաբանական ուսումնասիրության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Մասնագետ՝ Հ. Մեսրոպյան